ՊԻՍՈՒՅՁԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920—1925)

Մ. Գ. ԴԻԼԲԱՐՅԱՆ

Ինչպես Սովետական Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանը (1920—1925) բնութագրվում է հին ուսուցչության զգալի մասին գաղափարապես վերադաստիարակելու, հեղափոխության առջև դրված խնդիրների լուծմանը մասնակից դարձնելու տքնաջան աշխատանքով և պրոլետարական ուսուցչական կադրեր պատրաստելու քաղաքականությամբ։ «Այժմ մենք,— ասել է Վ. Ի. Լենինը քաղուսվարների համառուսաստանյան խորհրդակցությունում 1920 թ. նոյեմբերի 2-ին,— պետք է դաստիարակենք մանկավարժական ուսուցչական անձնակազմի նոր բանակ, անձնակազմ, որը պետք է սերտորեն կապված լինի կուսակցության հետ, նրա գաղափարների հետ, պետք է տոգորված լինի նրա ոգով...»[1]։

Փաստերը վկայում են, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ուսուցչության մեծ մասը կողմնորոշվում է դեպի սովետական իշխանությունը և ձեռնամուխ լինում դպրոցի վերականգնման ու զարգացման աշխատանքին։ Դրան նպաստեցին Ռ.Կ(բ)Կ Կենտկոմի՝ «Լուսավորության աշխատողների շրջանում աշխատանքի մասին» դիրեկտիվները, որոնք 1921 թ. աշնանը ուղարկվեցին տեղական կուսակցական կոմիտեներին։ Վերջ տրվեց ուսուցչի նկատմամբ անբարյացակամ վերաբերմունքին, քանի որ ուսուցչության հիմնական մասը լուրջ քաղաքական քննություն բռնեց՝ նյութական ծանր պայմաններում անգամ չլքելով լուսավորության գործը։ Հայաստանի սովետների անդրանիկ համագումարի (1922 թ. հունվար) առաջին նիստում Ալ. Մյասնիկյանը նշեց, որ գյուղում լուսավորության տարածողը պետք է լինի սովետական ուսուցիչը և շեշտեց ուսուցչության նյութական վիճակի բարելավման հրատապ անհրաժեշտությունը։ «Առանց այդ (նյութական— Մ. Դ.) ապահովության,— ասաց նա,— մենք չենք կարող ունենալ ոչ դպրոց, ոչ ուսում, ոչ էլ դասատուների կազմ ու պատրաստ բանակ»[2]։

«Խորհրդային Հայաստան» թերթը նշելով, որ նորաստեղծ հանրապետության ծանր տնտեսական կացությունը և քաղաքացիական կռիվները հնարավորություն չեն տալիս պատշաճ ուշադրություն դարձնելու լուսավորության գործին, ավելացնում էր. «Այսօր բարեբախտաբար այդ ծանր ժամանակներն անցնելու վրա են» և բացվում են լավ հեռանկարներ դպրոցական գործի զարգացման համար։ Ամենուրեք սովի տուրվականի չքացման հետ մեկտեղ, ուժե-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 461։

2 Ալ. Մարտունի, Խորհրդային Հայաստանի ուղին, Թիֆլիս, 1924, էջ 35։

զանում է հետաքրքրությունը դեպի մատաղ սերնդի կրթությունը[3]։ Թերթը մատնացույց էր անում դպրոցական շինարարության երկու հիմնական խնդիր՝ ուսուցչության նյութական վիճակի բարելավում և ուսուցիչների մտավոր պատրաստության ու դպրոցների որակի բարձրացում։

Ուսուցչի նկատմամբ սովետական իշխանության ցուցաբերելիք վերաբերմունքի մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Մեզ մոտ ժողովրդական ուսուցիչը պետք է դրված լինի այնպիսի բարձրության վրա, որի վրա նա երբեք կանգնած չի եղել...։ Իրերի այդ դրությունը մենք պետք է հասնենք սիստեմատիկ, անշեղ, համառ աշխատանք կատարելով և՛ նրան հոգեպես բարձրացնելու, և՛ նրան իր իրապես բարձր կոչմանը բազմակողմանի կերպով պատրաստելու, և՛ որ գլխավորն է, գլխավորն ու գլխավորը՝ նրա նյութական դրությունը բարձրացնելու համար»[4]։

Կուսակցության XII համագումարը (1923 թ. ապրիլ) ընդգծելով դպրոցների որակական աճը, ցուցում տվեց անշեղորեն շարունակել և ուժեղացնել գյուղական դպրոցի որակի բարձրացման և ուսուցչության նյութական դրության բարելավման ուղղությամբ կատարվող աշխատանքը։ 1924 թ. հրապարակվեց[5] «Գյուղական ուսուցչության մեջ կատարվելիք աշխատանքների մասին ՌԿ(բ)Կ Կենտկոմի բոլոր շրջանային բյուրոներին, ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին, ՌԿ(բ)Կ շրջկոմներին և նահանգկոմներին» ուղղված մարտի 4-ի որոշումը, որտեղ թվարկվում էին նաև ուսուցչության կատարելիք հասարակական աշխատանքների տեսակները, տեղական կուսակցական մարմիններին ցուցում էր տրվում լուսավորության աշխատավորների միությունը դարձնել գյուղում կուսակցության ազդեցության հենակետերից մեկը, մասնավորապես ուժեղացնել ուշադրությունը՝ գյուղի ուսուցչության ինքնազարգացման աշխատանքներին մարքսիստական ուղղություն տալու վրա։ Որոշման համաձայն՝ անհրաժեշտ էր մեծ աջակցություն ցույց տալ նաև վերապատրաստման ուղղությամբ ժողովրդական լուսավորության բաժինների և միության աշխատանքներին՝ այնտեղ գործուղելով կոմունիստ դասախոսների։

1924 թ. մայիսի 30-ին «Խորհրդային Հայաստանը» գրում էր. «Որպեսզի մեր նոր պահանջներին բավարարող ուսուցչություն ունենանք, այդ առթիվ մեր թե՛ կուսակցական, թե՛ խորհրդային և պրոֆ. մարմինները հրատապ անհրաժեշտություն են համարել՝ ուշադրության առնել ուսուցչության վերապատրաստման և տնտեսական վիճակի բարելավման խնդիրը։ ...Գյուղը քաղաքի հետ կապողը պիտի լինի ուսուցիչը»։

Կուսակցության XIII համագումարը (1924 թ. մայիս) նշեց, որ անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում «...գյուղական ուսուցիչը կարող է կուլտուրական ակտիվ ուժ դառնալ գյուղում սովետական հասարակայնության ձևավորման գործում»։ Այդ իսկ պատճառով քաղլուս աշխատանքներում ուսուցչի ընդգրկմանը, նրան անհրաժեշտ քաղաքական նյութերով մատակարարելուն պետք է տալ առաջնահերթ նշանակություն[6]։

---

3 «Խորհրդային Հայաստան», 12. VII. 1922։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 551։

5 «Խորհրդային Հայաստան», 15. III. 1924։

6 «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», II մաս, Երևան, 1955, էջ 70։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ «Նոր մանկավարժության խնդիրն է ուսուցչական գործունեությունը կապել հասարակության սոցիալիստական կազմակերպման խնդրի հետ»[7]։

Քաղաքական այս կարևոր խնդիրների լուծմանը մեծապես կարող էր նպաստել ուսուցչության նյութական վիճակի բարելավումը, որը, սակայն նեպի ժամանակ շատ դանդաղ էր լուծվում։ Հայաստանի երկրորդ աստիճանի դպրոցների ուսուցչության I համագումարում (1924 թ. ապրիլ) լուսժողկոմատի սոցդասգլխավար Տ. Մուշեղյանը նշում էր, որ ուսուցչության նյութական վիճակի բարելավումը ամենացավոտ խնդիրն է, որը դեռ չի լուծվել։ Այդ պատճառով էլ Երևանում որոշ ուսուցիչներ լքել են լուսավորության բնագավառը և անցել այլ աշխատանքի։ Հիմք ունենալով ուսուցչության աշխատավարձի բարձրացման վերաբերյալ ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի 1924 թ. մայիսի 12-ի որոշումը, Տ. Մուշեղյանը հույս էր հայտնում, որ հաջորդ տարվա սկզբում այդ խնդիրը հնարավոր կլինի լուծել[8]։

Ուսուցչական կադրերի նկատմամբ կուսակցության հոգատարությունը դրսևորվում էր ոչ միայն ուսուցչության նյութականը բարելավելու հարցերում, այլև նրա կուլտուրական, քաղաքական և մանկավարժական մակարդակի բարձրացումն ապահովող միջոցառումներում։

Կուսակցության XIII համագումարը խնդիր դրեց ուսուցիչների համար պարբերաբար հրավիրել դասընթացներ, կազմակերպել կուսակցության և սովետական իշխանության քաղաքականությունն ուսումնասիրող ինքնակրթության խմբակներ, ամրապնդել ու զարգացնել լուսավորության աշխատողների տները՝ գրանցում կենտրոնացնելով ուսուցչության շրջանում տարվող աշխատանքները։

Ինչպես արդեն նշվեց, նոր դպրոցի ստեղծման գործում կարևոր խնդիր էր պրոլետարական ուսուցչական կադրերի ստեղծումը։ Այն պետք է լուծվեր հիմնականում հին կադրերի վերապատրաստման ու քաղաքական վերադաստիարակման և նոր կադրերի պատրաստման միջոցով։ Հայաստանում սովետական կարգերի հաստատման հենց առաջին օրերից նորաստեղծ լուսժողկոմատի մտահոգության առարկան դարձավ կադրերի մասնագիտական վերապատրաստումը։ Դա բացատրվում է նրանով, որ ուսուցչության մեծ մասն ուներ միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն։ 1921 թ. ամառվանից պարբերաբար սկսեցին գործել ուսուցչության վերապատրաստման մինչև երկու ամիս տևողությամբ դասընթացներ։

Առանձնահատուկ նշանակություն էր տրվում 1921 թ. ամռանը Դիլիջանում կազմակերպված եռամսյա դասընթացներին, որոնք նպատակ ունեին պատրաստել ուսուցիչներ և հրահանգիչներ։ Նրանցից շատերն աշխատելու էին գավառներում կազմակերպվելիք ցուցադրական դպրոցներում[9]։ Երկամսյա դասընթացներ կազմակերպվեցին Նոր Բայազետում (Կամո)։ Տեղի գավլուսբաժնի խնդրանքով լուսժողկոմատն այդ դասընթացները վարելու համար դասախոսներ ուղարկեց։ Դասընթացներում, որոնք ունեին առարկայական և մեթոդամանկավարժական ուղղություն, դասավանդվելու էին ընդհանուր ման-

---

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 556։

8 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 122, ց. 1, գ. 85, թ. 26—31։

9 Նույն տեղում, գ. 6, թ. 25։

կավարժություն, դիդակտիկա, լեզվի, մաթեմատիկայի և բնագիտության մեթոդիկաներ, հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա (թվաբանություն, երկրաչափություն և հանրահաշվի տարրեր) ու բնապատմություն[10]։ 1921 թ. ամառային դասընթացներ կազմակերպվեցին նաև Ղարաքիլիսայում (Կիրովական)։

1922 թ. ամռանը Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրի (Լենինական), Ղարաքիլիսայի, Դիլիջանի և Մեղրու գավառներում կազմակերպված դասընթացներին մասնակցեցին 400 ուսուցիչ-ուսուցչուհիներ։ Երևանում 1922 թ. օգոստոսին կարճատև դասընթացներ կազմակերպվեցին ասորական լեզվի 6 ուսուցիչների համար[11]։

Երևան քաղաքի և գավառի կոմունիստական կազմակերպության IV կոնֆերանսում (1923 թ. մարտ) ժողովրդական լուսավորության մոտակա խնդիրների մասին Ա. Մռավյանի զեկուցման առթիվ ընդունված բանաձևում ընդգծվում էր, որ լուսավորության բնագավառի աշխատողների և առանձնապես ուսուցչության որակի բարձրացումը նրանց նյութական վիճակի բարձրացմանը հավասար անհետաձգելի խնդիր է։ Որոշման մեջ նշվում էր, որ ուսուցիչների վերապատրաստումը աշխատանքային դպրոցի ոգով և նրանց մեջ կուլտուր-քաղաքական աշխատանք կատարելը դպրոցական գործի բարելավման անհրաժեշտ պայմաններ են[12]։

1923 թ. կազմակերպված ամառային դասընթացներին լուսժողկոմատի կոլեգիայի որոշմամբ թույլատրվեց մասնակցելու նաև Ամերկոմի դպրոցների ուսուցիչներին։ Միաժամանակ կոլեգիան պետհրատին առաջարկեց զեղչված գներով դասագրքեր տալ Ամերկոմի դպրոցներին։

1923 թ. 1,5-ամսյա ամառային դասընթացներ գործեցին Երևանում, Ալեքսանդրում, Դիլիջանում, Ջալալօղլիում (Ստեփանավան), Նոր Բայազետում և Գորիսում։ Երևանի ադրբեջանցի ուսուցիչների համար կազմակերպված դասընթացներից բացի 16 ուսուցիչներ գործուղվեցին Բաքվի եռամսյա մանկավարժական դասընթացները։

Մեր հանրապետությունում գործող դասընթացները նպատակ ունեին ուսուցչությանը տալ ընդհանուր մանկավարժական, քաղաքական, առարկայական և գյուղատնտեսական կրթություն։ Այդ նպատակով դասավանդվում էին քաղաքական գրագիտություն, սովետական սահմանադրություն, աշխատանքի դպրոցի տեսություն, տնտեսական աշխարհագրություն, դպրոցավարություն, մայրենի լեզվի, բնագիտության և մաթեմատիկայի մեթոդիկաներ, ընդհանուր գյուղատնտեսություն, մեղվաբուծություն, անասնապահություն, կաթնատնտեսություն և բնագիտություն։ Բացի վերոհիշյալ դասընթացներից, սոցդասգլխվարչությունը 9 ուսուցիչների գործուղեց Մոսկվա՝ 1923 թ. ամառային երկամսյա դասընթացներին մասնակցելու համար։

Լուսժողկոմատի կոլեգիան հաստատեց և հրահանգեց 1923 թ. սեպտեմբերից գործադրելու մանկավարժական ուժի վերապատրաստման բաժնի և լուսաշխի վարչության համատեղ մշակած՝ ուսուցչության տեսական վերապատրաստության կանոնադրությունը։ Գավառաբաժիններին կից ստեղծվեցին

---

10 Նույն տեղում, թ. 23։

11 Նույն տեղում, գ. 44, թ. 1—4։

12 «Խորհրդային Հայաստան», 4. III. 1923։

էքսպերտ հանձնաժողովներ, որոնք վերապատրաստության գործը կազմակերպելուց բացի, պետք է զբաղվեն անպատրաստ կադրերին։ Ի դեպ, լուսժողկոմատի 1923 թ. հաշվետվության մեջ նշվում է, որ անբարյացակամ և անպատրաստ տարրերի զտման հետևանքով 1923/24 ուս. տարում (սկզբում— Մ. Դ.) նկատելիորեն բարձրացել է միջնակարգավարտների տոկոսը[13]։

Ընդհանուր առմամբ՝ 1923 թ. ամառային դասընթացներին մասնակցեցին 474 ուսուցիչներ։

1924 թ. հունվարին սոցդասգլխվար Տ. Մուշեղյանը լուսժողկոմատի կոլեգիայում զեկուցեց, որ ուսուցչական նոր կադրեր պատրաստելու համար նպատակահարմար է համարվել կիսամյա դասընթացներ հիմնել Ալեքսանդրոպոլում և լուսբաժիններին թույլ տալ էքսպերտ հանձնաժողովի միջոցով քննել ուսուցչությամբ զբաղվել ցանկացողներին։ Որոնվում էին ուսուցիչների կատարելագործման նաև այլ ձևեր ու միջոցներ։ Այսպես, օրինակ, 1923/24 ուս. տարվա սկզբից Ալեքսանդրոպոլի գավլուսբաժինը կազմակերպեց կիրակնօրյա դասախոսություններ, որոնց մասնակցում էին նաև Ամերկոմի ուսուցիչները։ Ստեղծվել էին նաև մանկավարժական, հասարակագիտական և բնագիտական սեկցիաներ, որտեղ ընթերցվում էին ռեֆերատներ, կազմակերպվում փորձնական դասեր և այլն։

Ուսուցիչների որակավորման բարձրացման նպատակով նմանօրինակ միջոցառումներ (ժողովներ, սեմինարներ, փորձնական դասեր, կոնֆերանսներ, դասախոսություններ և այլն) կազմակերպվեցին Հայաստանի մի շարք գավառներում ու քաղաքներում, մասնավորապես Երևանում[14]։ Լոռի-Փամբակի գավառի գրեթե բոլոր շրջաններում ամառային դասընթացներից զատ ամիսը մեկ գործում էին ուսուցչական «համագումարներ» (հավաքույթներ), որտեղ տրվում և քննարկվում էին փորձնական դասեր, ընթերցվում էին քաղաքական և մանկավարժական թեմաներով ռեֆերատներ[15]։ Այդ միջոցառումները թարմություն էին մտցնում, մտքեր շարժում և շատերին մղում ինքնակրթության ու ինքնակատարելագործման։

1924 թ. հունիսին ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմը խնդիր դրեց գյուղացիական լայն մասսաների կուլտուր-քաղաքական դաստիարակության գործում գյուղական ուսուցչությանն օգտագործելու նպատակով լուրջ ուշադրություն դարձնել վերջինիս շրջանում տարվող աշխատանքին։ Երկրային կոմիտեն պահանջում էր, որ կուսկազմակերպությունները լուսժողկոմատի հետ համագործակցելով՝ ակտիվ մասնակցություն ունենան ամառային դասընթացների ծրագրերը կազմելու և իրագործելու խնդրում։ Առաջարկվում էր դասընթացներում մտցնել դասախոսությունների ցիկլ՝ նվիրված սովետական շինարարությանը, ՌԿ(բ)Կ պատմությանը, Հոկտեմբերյան հեղափոխությանը, ազգային և կրոնական հարցերին, միջազգային դրությանը[16]։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում գավառակային յոթնամյա և տարրական գյուղատնտեսական դպրոցների զարգացումը հրամայական պահանջ էր դարձել։ Այդ դպրոցների համար ուսուցչական կադրեր վերապատրաստելու նպատակով 1924 թ. հունիսից Երևանում

13 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 653, թ. 70։

14 Նույն տեղում, գ. 103, թ. 20—26։

15 «Խորհրդային Հայաստան», 11. V. 1924։

16 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 89, թ. 21—22։

սկսեցին գործել կենտրոնական բարձր տիպի ուսուցչական երկամսյա դասընթացներ՝ հասարակագիտական և բնագիտական-գյուղատնտեսական բաժանմունքներով։ Միաժամանակ առաջին աստիճանի դպրոցների ոչ միջնակարգավարտ ուսուցիչների 1,5—2-ամսյա վերապատրաստման դասընթացներ կազմակերպվեցին Ղարաքիլիսայում, Նոր Բայազետում, Աշտարակում, Երևանում, Դարալագյազում (Եղեգնաձոր), Ղուրդուղուլիում (Արմավիր), Մեղրիում (Լիչքվազում) և Դիլիջանում։

Հետևողական աշխատանք էր տարվում նաև ազգային փոքրամասնությունների ուսուցչության գիտական ու մեթոդա-մանկավարժական մակարդակի բարձրացման ուղղությամբ։ Երևանի լուսաշխի տանը գործում էր ադրբեջանցի ուսուցչության հատուկ լեկտորիում, որտեղ կարդացվող դասախոսություններին մասնակցում էին նաև այլ զբաղմունքի տեր ադրբեջանցի մտավորականներ։ 1924 թ. մայիսին Հայաստանի լուսժողկոմատը բանակցում է Ադրբեջանի լուսժողկոմատի հետ՝ ադրբեջանցի ուսուցիչների համար Դիլիջանում և Լենինականում բացվելիք դասընթացների համար դասախոսներ հրավիրելու նպատակով։ Այդ դասընթացներում դասավանդվում էին քաղաքական, մանկավարժական և առարկայական պատրաստությունը բարձրացնող առարկաներ։ 1924 թ. ամռանը հրավիրվում է նաև ռուս, ասորի և հույն ուսուցիչների կոնֆերանս, որտեղ քննարկվում են ազգային փոքրամասնությունների շրջանում տարվելիք աշխատանքները։

1924 թ. ամառային դասընթացներին ընդհանուր առմամբ մասնակցեցին 550 ուսուցիչներ։ Բացի այդ, 1923/24 ուս. տարում Երևանի լուսաշխի տանը կազմակերպվեցին մեթոդական սեկցիոն աշխատանքներ։ Լուսաշխի միությանը կից գործում էին նաև մանկավարժական հասարակական և քաղաքագիտության սեկցիաներ։ Նմանօրինակ աշխատանքներ կազմակերպեց նաև Լենինականի լուսբաժինը՝ Ամերկոմի դպրոցների ուսուցչության համար։

Լուսժողկոմատի սոցդասգլխվարչությունը 1924 թ. դեկտեմբերի 9-ին ՀԼԿԵՄ Կենտկոմին տեղեկացնում էր, որ առաջին աստիճանի դպրոցների համար ուսուցչական նոր կադրեր պատրաստելու նպատակով ծրագրվում է նոր տարվա սկզբից Երևանում և Լենինականում հիմնել 9-ամսյա մանկավարժական դասընթացներ, որոնց ունկնդիրները ապահովվելու էին ձրի սննդով և «բնակարանով»[17]։

Ուսուցչության մեթոդական ինքնավերապատրաստման օրգաններ էին շրջանային մանկավարժական խորհուրդները, որոնց աշխատանքները ղեկավարում էին լուսբաժիններին կից կազմված գավառական մեթոդական բյուրոները։ Բոլոր դպրոցները ստանում էին «На путях к новой школе» և «Педагогические курсы» ամսագրերը։ Ուսուցչությանն օգնելու նպատակով կազմակերպվում էին շրջիկ գրադարաններ։

1925 թ. ապրիլին Ամերկոմի նախաձեռնությամբ վերապատրաստման երեկոյան դասընթացներ բացվեցին Պոլիգոնում (Լենինական)։ Դրանց նպատակն էր Ամերկոմի դպրոցների համար «պատրաստել մանկավարժական ժամանակակից մեթոդները և մանավանդ կոմպլեքսիվ սիստեմը յուրացրած ուսուցիչներ»[18]։

---

17 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 560, թ. 7։

18 Նույն տեղում, գ. 133, թ. 10։

Նույն թվականի ամռանը նախադպրոցական, գյուղերիտ և գյուղատնտեսական դպրոցների միջնակարգ կրթությամբ ռուս ուսուցիչների և թերի միջնակարգ կրթություն ունեցող ադրբեջանցի ուսուցիչների վերապատրաստման համար Լենինականում կազմակերպվեցին կենտրոնական դասընթացներ։ Վերոհիշյալ կենտրոնական դասընթացներում տեղեր հատկացվեցին նաև Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ուսուցչության համար[19]։ Դասընթացների ծրագրերը բաղկացած էին կազմակերպչական-վարչական, գիտա-մանկավարժական և քաղաքական-հասարակական բաժիններից։

Դպրոցների վարիչների և առաջին աստիճանի դպրոցների որակյալ ուսուցիչների համար 1925 թ. ամռանը Երևանի, Էջմիածնի, Լոռի-Փամբակի, Դիլիջանի և Մեղրու գավառներում գավլուսբաժինների միջոցներով կազմակերպվեցին մեկամսյա դասընթացներ։ Բացի վերոհիշյալներից, բոլոր գավառներում (բացառությամբ Մեղրու) կազմակերպվեցին հատուկ ծրագրով շրջանային դասընթացներ։ Ընդհանուր առմամբ՝ 1925 թ. վերապատրաստման դասընթացներին մասնակցեցին 450 ուսուցիչներ։ Այսպիսով, 5 տարվա ընթացքում հանրապետությունում վերապատրաստման ենթարկվեցին ավելի քան 2000 ուսուցիչներ (ուսուցչական կազմի 85%-ը)։ Չնայած կարճատևությանը, այդ դասընթացներն ունկնդիրներին զինեցին տեսական, մեթոդամանկավարժական գիտելիքներով և գործնական կարողություններով ու հմտություններով։ Սակայն դպրոցական ծրագրերի և դասավանդման մեթոդական սիստեմների բարեփոխության հետևանքով մանկավարժական կազմի վերապատրաստման կարիքը օրավուր մեծանում էր։ Հանրապետության ուսուցչության մեթոդամանկավարժական և առարկայական պատրաստության բարձրացմանը մեծապես նպաստեց նաև 1921 թ. վերջերից Երևանում գործող մանկավարժական թանգարանը։ Հետագայում այդ թանգարանին կից ստեղծվեցին ինքնաշեն սարքերի ցուցադրական արհեստանոց և լուսժողկոմատի հաստատություններին ուսումնա-գիտողական պարագաներ մատակարարող բաղա[20]։ Թանգարանն ուներ մանկավարժական գրադարան և երեք լսարան, որոնցում պարապմունքներ էին կազմակերպվում ոչ միայն աշակերտության, այլև քաղաքի ու շրջանների ուսուցչության համար։ Հաճախ այստեղ էին կազմակերպվում նաև կենտրոնական մանկավարժական դասընթացները։ Ուսուցչությանը մեթոդական օգնություն ցույց տալու գործում որոշակի դեր խաղաց նաև կենտրոնական փորձնական դպրոցը, որին կից հաճախ կազմակերպվում էին ուսուցիչների ամառային դասընթացներ։

Վերականգնման ժամանակաշրջանում Հայաստանում կարևոր խնդիր էր նաև բարձրագույն և միջնակարգ մանկավարժական կրթական ցանցի ստեղծումն ու զարգացումը, քանի որ այն ըստ էության գոյություն չէր ունեցել[21]։ Բարձրագույն կրթությամբ մանկավարժական կադրերի պատրաստման գործում հսկայական դեր խաղաց ժողովրդական համալսարանը[22]։ Այն ուներ նաև մանկավարժական ֆակուլտետ, որի բազայի վրա 1922 թ. նոյեմբերի 7-ին

---

19 Նույն տեղում, գ. 568, թ. 11։

20 Նույն տեղում, ց. 3, գ. 4ա, թ. 121 և ց. 1, գ. 259, թ. 13։

21 Նախասովետական Հայաստանում ուսուցիչներ էին պատրաստվում միայն Երևանի ուսուցչական սեմինարիայում և մասամբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։

22 Լ. Պ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը, Երևան, 1965։

բացվեց երկամյա մանկավարժական ինստիտուտը[23]։ 1923 թ. աշնանն ինստիտուտի առաջին կուրսում սովորում էին 39, իսկ երկրորդում՝ 34 ուսանող-ուսանողուհիներ։ Ինստիտուտում կազմակերպված էին քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաներ, հոգեբանության ու կենսաբանության կաբինետներ, ինչպես նաև ատաղձագործական «արվեստանոց»։

1923 թ. սեպտեմբերին որոշվեց մանկավարժական ինստիտուտը դարձնել երեքամյա. առաջին և երկրորդ կուրսերը նվիրվելու էին ընդհանուր գիտելիքներին, իսկ երրորդը՝ մասնագիտականին (աշխատանքի դպրոցի մեթոդիկա և պրակտիկա)։ Հաստատվեց նաև ինստիտուտի ուսումնական պլանը[24]։

Մանկավարժական կադրերի պակասի ու նրանց շուտափույթ պատրաստման կարևորության մասին է վկայում 1922 թ. մարտի 1-ին ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի ստորագրած դեկրետը՝ «Միջնակարգ և բարձրագույն դպրոցների ուսուցիչներին և աշակերտներին զորակոչից ազատելու մասին»։ Այս նկատառումով էլ Երևան քաղաքի և գավառի կոմունիստական կազմակերպության IV կոնֆերանսը որոշեց լուսավորության գործը համարել հարվածային։ «Ուսուցչական պատրաստություն ունեցող կոմունիստ ընկերներին,— ասված է կոնֆերանսի որոշման մեջ,— պիտի ազատել մյուս աշխատանքներից, դնել աշխատանքի՝ լուսժողկոմատի օրգաններում և մանավանդ դպրոցներում»[25]։

1923/24 ուս. տարվա սկզբին ժողովրդական համալսարանը վերակառուցվեց ՀՍԽՀ Պետական համալսարանի։ 1924 թ. հուլիսի 8-ի նիստում լուսժողկոմատի կոլեգիան քննության առնելով համալսարանի վերակազմության հարցը, որոշեց «փակել պատմագրական ֆակուլտետը. փակել նաև մանկավարժական ինստիտուտը և այս երկուսից վերակազմել երեք տարվա դասընթացքով՝ մանկավարժական ֆակուլտետ. ա) կենսաբանական, բ) հասարակագիտական և գ) ֆիզիկո-մաթեմատիկական բաժանմունքներով»[26]։ Սակայն ժողկոմխորհը այլ որոշում ընդունեց՝ մանկավարժական ինստիտուտը միացնելով համալսարանին, որպես հասարակագիտական ֆակուլտետի մի ճյուղ, որն իր հերթին ուներ ֆիզիկա-մաթեմատիկական, կենսաբանական և պատմագրական բաժիններ, որտեղ 1924/25 ուս. տարում սովորում էին 42 հոգի[27]։

Համալսարանն ինչ-ինչ պատճառներով չկարողացավ ժամանակին կազմակերպել մանկավարժական բաժինը և հատկապես նրա կենսաբանական բաժանմունքը, որի հետևանքով տուժում էր վերջինիս «Գ» կուրսը։ Հարցը լուծվեց մանկավարժական թանգարանի շենքում «Գ» կուրսի (կենսաբանական թեքումով) վերաբացման ճանապարհով, որը պետք է առանձին գոյություն ունենար մինչև ուս. տարվա վերջը (1925 թ. հուլիս) և ապա միանար համալսարանին[28]։ Այս վիճակը ևս երկար չտևեց. հաջորդ՝ 1925/26 ուս. տարում մանկավարժության բաժինն առանձնացավ իբրև ինքնուրույն ֆակուլտետ և գործեց մինչև 1930 թ., երբ տեղի ունեցավ համալսարանի նոր վերակազմությունը։ Այսպիսով, սովետահայ դպրոցի զարգացման առաջին տասնամյակում

23 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 30, թ. 62։
24 Նույն տեղում, գ. 3, թ. 6։
25 «Խորհրդային Հայաստան», 4. III. 1923։
26 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 259, թ. 60։
27 Նույն տեղում, գ. 203, մաս 2-րդ, թ. 12։
28 Նույն տեղում, գ. 109, թ. 35։

բարձրագույն կրթությամբ մանկավարժական կադրեր պատրաստում էր միայն պետական համալսարանը, որն սկսեց շրջանավարտներ տալ 1924/25 ուս. տարում։ Առկա կադրերն ու համալսարանից ունեցած սպասումները հնարավորություն ընձեռեցին արդեն 1924 թ. հոկտեմբերից բացելու Երևանի (2 խմբով և 53 ուսանողով) և Լենինականի (3 խմբով, 82 ուսանողով) եռամյա մանկավարժական տեխնիկումները։ Երևանի տեխնիկումի ուսանողության 1/3-ը, իսկ Լենինականի տեխնիկումինն ամբողջությամբ պետական և Ամերիկոմի մանկատների սաներից էին[29]։ Լենինականում Պոլիգոնի գպրոցներում 1924/25 ուս. տարում որպես ուսուցիչ պաշտոնավարում էին շուրջ 30 հոգի, որոնք Ամերիկոմի ցերեկային և երեկոյան դպրոցների շրջանավարտներ էին։

Լուսժողկոմատի կոլեգիայի 1925 թ. հունիսի 2-ի նիստում նախատեսվեց մանկավարժական տեխնիկումներ բացել նաև Երևանում՝ ադրբեջանական և Էջմիածնում ու Ստեփանավանում՝ հայկական[30]։ 1925 թ. հոկտեմբերին Երևանում բացվեց ադրբեջանական մանկավարժական գիշերօթիկ տեխնիկումը (հիմնական կուրսերում 32, իսկ միամյա կուրսերում՝ 17 ուսանողներով)[31]։ Տեխնիկումի շրջանավարտները պարտավոր էին Հայաստանի գյուղերում պաշտոնավարել 4 տարուց ոչ պակաս։ Մանկավարժական տեխնիկումներ բացվեցին նաև Վաղարշապատում (Էջմիածին) և Ստեփանավանում։

Չնայած լուսժողկոմատի գործադրած մեծ ջանքերին, շատ տեղերում ուսուցիչների պակասը խիստ խանգարում էր կրթական գործի ծավալմանը։ Այսպես, օրինակ, 1924 թ. Բաշգյուղի (Գառնի) գավառամասում դպրոցահասակ 2000 երեխաներից 739-ը ուսուցիչ չլինելու պատճառով չէին սովորում[32]։ Ղամարլուի (Արտաշատ) շրջանի Ն. Ղույլասար (Դիմիտրով) ասորական գյուղում սովորող հայ աշակերտները ուսուցիչ չունենալու պատճառով 1923/24 և 1924/25 ուս. տարիներին սովորում էին ասորերեն և ռուսերեն լեզուներով[33]։ Ղարաքիլիսայի գավլուսբաժվար Հր. Ղազազյանը գրում է, որ «Շատ տեղերում դասատվությունը տեղի ունի մի քանի սմենններով և ուսուցիչներից շատերն աշխատում են մի քանի նվագ»[34]։

Ուսուցչական կադրերի պակասի պատճառով առանձին վայրերում ուսուցչական ասպարեզ թափանցեցին պատահական մարդիկ։ Նման երևույթները կանխելու նպատակով լուսժողկոմատը մտադրվել էր տարրական և մասամբ յոթնամյա դպրոցների ուսուցչական կադրերը լրացնել ի հաշիվ երկրորդ աստիճանի դպրոցների շրջանավարտների։ Բացի այդ, պահանջ էր դրվում դատում անցկացնել ուսուցչության մեջ[35]։

Դեռևս Հայաստանի սովետների անդրանիկ համագումարի առաջին նիստում Ալ. Մյասնիկյանն, անդրադառնալով ամերիկյան որբանոցների խնդրին, նշեց, որ «Այսօր մենք պահանջ ենք դնում, որ ամերիկական որբանոցների բարձր ծառայողների և ուսուցիչների կազմը վերաքննվի, որպեսզի կուլտուրական ուսուցչությունը կամ մաուզերիստական տարրերը չթաքնվեն ամերի-

29 Նույն տեղում, գ. 109, թ. 35, գ. 208, մաս 2-րդ, թ. 108 և գ. 259, թ. 57։
30 Նույն տեղում, գ. 573, թ. 18։
31 Նույն տեղում, գ. 203, մաս 2-րդ, թ. 15։
32 «Խորհրդային Հայաստան», 17. I. 1924։
33 ՀՍՍՀ ՀԱՍՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 574, թ. 112։
34 «Մարտակոչ», 17. VII. 1923։
35 «Խորհրդային Հայաստան», 3. VI. 1924։

կական հաղուստի ծալքերում՝ ի վնաս բանվորագյուղացիական կադրերի»[36]։ 1923 թ. սեպտեմբերին լուսժողկոմատի կոլեգիան որոշեց անբարեհույս ուսուցիչների գտում կատարել նաև Ամերկոմի դպրոցներում՝ ղտման հանձնաժողովին մասնակից դարձնելով լուսժողկոմատի և լուսաշխի միության ներկայացուցիչներին։

Կադրերի տեսակետից անհամեմատ լավ էր երկրորդ աստիճանի դպրոցների վիճակը։ 1924 թ. հունիսին այդ դպրոցների 140 ուսուցիչներից 86-ը ունեին բարձրագույն, իսկ 10-ը՝ միջնակարգից բարձր կրթություն։ Այդ դպրոցներում միայն հասարակագիտական, բնագիտական և մաթեմատիկական առարկաների ուսուցիչների կարիք էր զգացվում[37]։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում Հայաստանի ուսուցչության թվական կազմի և աճի վերաբերյալ թե՛ արխիվային փաստաթղթերում[38], թե՛ մամուլում ու հրապարակված աշխատություններում և թե՛ վիճակագրական վարչության ամփոփագրերում դժբախտաբար առկա են միանգամայն իրարամերժ տվյալներ։ Այդուամենայնիվ, հիմնվելով պաշտոնական տվյալների վրա, կարելի է հաստատապես ասել, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության, կառավարության և լուսժողկոմատի ջանքերով հանրապետության ուսուցչության թվական կազմը 1920—1925 թթ. մոտավորապես կրկնապատկվեց։ Այսպես, եթե 1920/21 ուս. տարում բոլոր դպրոցներում աշխատում էին 1255 ուսուցիչներ, ապա 1924/25 ուս. տարում նրանց թիվը 2339 էր[39]։

Հայաստանի լուսժողկոմ Ա. Մռավյանի զեկուցագրերից մեկում բերվում են հետևյալ տվյալները (1926 թ. հունվարի 1-ի դրությամբ)[40]. սոցիալական դաստիարակության դպրոցներում՝ 2288 ուսուցիչ, Ամերկոմի դպրոցներում՝ 254, երկաթուղային սեկցիայում՝ 78. ընդամենը՝ 2620 ուսուցիչ։ Այս թվից առաջին աստիճանի դպրոցներում՝ 1816 ուսուցիչ, յոթնամյաներում՝ 559, երկրորդ աստիճանի դպրոցներում՝ 153, մանկապարտեզներում՝ 75, փորձացուցադրական դպրոցում՝ 17 ուսուցիչ։ Ըստ կրթական ցենզի՝ բարձրագույն կրթությամբ 102 հոգի, թերի բարձրագույն՝ 95, միջնակարգ՝ 1625, թերի միջնակարգ՝ 424, դրանից ցածր կրթությամբ՝ 375 հոգի։ Ըստ կուսակցականության՝ 48 կոմունիստ, 77 կուսանդամության թեկնածու, 154 ՀԼԿԵՄ անդամ, 42 անդամության թեկնածու և 2299 անկուսակցական։

Այս տվյալները հիմք են տալիս ասելու, որ եթե ուսուցչական կազմի քանակական աճը կարելի է բավարար համարել, ապա ըստ կրթական ցենզի այն դեռևս շատ հեռու էր այդպիսին լինելուց և չէր կարող ապահովել դպրոցի օրավուր աճող պահանջներն ու իրագործելու այն լուրջ խնդիրները, որ կյանքը դնում էր դպրոցի առաջ։ Այստեղից էլ բխում էին այն կարևորագույն խնդիրները, որոնք հետագայում ծառանալու էին լուսժողկոմատի առաջ՝ որակյալ ուսուցչական կադրերի պատրաստման ուղղությամբ։

---

36 Ա. Մարտունի, նշվ. աշխ., էջ 20։

37 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 85, թ. 26—31։

38 Նույն տեղում, գ. 109, թ. 33, 34, գ. 203, մաս 2-րդ, թ. 130, գ. 130, թ. 31, 32, գ. 653, թ. 69, ֆ. 163, գ. 207, թ. 14, ֆ. 122, ց. 3, գ. 4a, թ. 114։

39 Ա. Խ. Մովսիսյան, Մ. Հ. Սանթրոսյան, Գ. Ա. Նազիկյան, Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության, Երևան, 1955, էջ 25։

40 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 3, գ. 4a, թ. 114։

Ինչպես արդեն ասվեց, ուսուցչության քաղաքական ու գաղափարական վերադաստիարակման միջոցներ էին նաև ուսուցչական կոնֆերանսներն ու համագումարները։ Հայաստանի ուսուցչության քաղաքական դիմադարձին նպաստող երևույթներից առավել նշանակալից է 1924 թ. դեկտեմբերին կայացած համահայաստանյան ուսուցչական անդրանիկ համագումարը, որին մասնակցում էին 200 ուսուցիչներ։ Ուսուցչական համագումարի նախօրյակին «Խորհրդային Հայաստանը» գրում էր. «Ի պատիվ Հայաստանի ուսուցչության՝ պիտի ասել, որ նրա ամբողջ համակրությունն այսօր ուղղված է խորհրդային իշխանության կողմը...։ Ահա թե ինչու խոշոր է նշանակությունը դեկտեմբերի վերջը հավաքվող ուսուցչական համագումարի, որը մեկ հայտարարի պիտի բերի ամբողջ հանրապետության ուսուցչության տրամադրությունը, վերջնականապես ձևակերպի նրա հասարակական դեմքն ու արժեքը և անքակտելի կապերով միացնի նրան խորհրդային իշխանության հետ։ ...համագումարը կուլտուր-շինարարական եռուն աշխատանքի ուղիներ է հարթելու ուսուցչության առաջ մեր գյուղում»[41]։

Համագումարը լսեց հանրապետության ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինի զեկուցումը ՍՍՀՄ ներքին ու արտաքին դրության և մեր խնդիրների մասին, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Հովհաննիսյանի զեկուցումը՝ «Պրոլետարական հեղափոխությունը և ուսուցչությունը»։ Խոսելով Հայաստանի պայմաններում հայ ուսուցչի հոգևոր ու քաղաքական կերպարի ձևավորման հանգամանքների մասին, Ա. Հովհաննիսյանը մասնավորապես նշում էր՝ «Խորհրդային իշխանության հաստատած խաղաղությունը, ազգային խնդրի լուծումը, քառամյա կառուցողական աշխատանքները, մասսաների աճող համակրանքը դեպի կոմունիստական կուսակցությունը, ուսուցչության կենցաղի բարվոքումը գալիս էին վերջիվերջո փշրելու նաև ուսուցչի քաղաքական կոնսերվատիզմը։ Ուսուցչական մասսայի քաղաքական տրամադրությունների հսկայական բեկումն այսօր իրողություն է նաև մեզանում»[42]։

Լսվեցին նաև Ա. Մռավյանի «Լուսավորության դերը խորհրդային շինարարության մեջ», Տ. Մուշեղյանի «Խորհրդային դպրոցը», Գումեդինի «ԼԿԵՄ-ը և ուսուցչությունը» զեկուցումները։

Հանրապետության ուսուցիչների համաժողովի օրակարգի հարցերի քննարկման մթնոլորտում թևածում էր այն գաղափարը, որ «Ե՛վ արտաքին քաղաքականության խնդիրներում, և՛ ներքին տնտեսական-շինարարական ֆրոնտում մասսայական ուսուցչությունն այլ ուղի չունի, քան այն, որով քայլում է բանվորագյուղացիական Հայաստանը»[43]։ Համագումարի ընդունած բանաձևում ասված էր, որ ուսուցչությունն այսուհետև կրկնակի եռանդով կլծվի գյուղում տարվող կուլտուրական աշխատանքին, իր գործունեությունը լիովին համաձայնեցնելով գյուղի հեղափոխական ուժերի, մասնավորապես կոմերիտմիության հետ։

Հանրապետության ուսուցչությունը համագումարում քաղաքական-հասարակական հասունության քննություն բռնեց, որով և նշանավորվեց նրա վերջ-

41 «Խորհրդային Հայաստան», 5. XII. 1924։
42 Նույն տեղում, 3. I. 1925։
43 Նույն տեղում, 31. XII. 1924։

նական շրջադարձը դեպի սովետական իշխանությունը և կոմունիզմի կառուցման ուղին։ Այսպիսով, ուսուցչի նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումները հնարավոր դարձրին նրա քաղաքական դիմադարձը նաև Սովետական Հայաստանում։ Սովետահայ ուսուցչությունը հասատ վճռականությամբ զինվորագրվեց երկրում սոցիալիզմի կառուցման, կուլտուրական հեղափոխության ծավալման մեծ ու շնորհակալ գործին։

ПЕРЕПОДГОТОВКА И ПОДГОТОВКА УЧИТЕЛЬСКИХ КАДРОВ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1920—1925)

М. Г. ДИЛБАРЯН

Резюме

Подготовка и переподготовка педагогических кадров всегда являлись одним из важных условий развития школы. Как в Советской России, так и в Армянской ССР период восстановления народного хозяйства характеризуется также работой по перевоспитанию значительной части старых учительских кадров и подготовке новых. Руководствуясь указаниями Ленина о заботливом отношении к учителям, Коммунистическая партия Армении и правительство в 1920—1925 гг. проделали большую работу не только по улучшению материального положения учителей, но и по повышению их морально-политического и культурно-теоретического уровня.

Значительная работа была проведена также по подготовке учительских кадров для школ национальных меньшинств.

За пять лет было переподготовлено более чем 85% учителей республики. Большую роль в деле переподготовки и подготовки учительских кадров, их политического воспитания сыграл I-ый съезд учителей Армении, состоявшийся в декабре 1924 г.